

# ԻՆԶՊԵՄ ԷԻՆ ՄԵՌԵՆՈՒՄ

## I

Սարալանջի մամուտ ժայռին  
Մէջքը լենած լեռնոցին  
Աչերն անթարթ շուրջ լածելով՝  
Մուտքն է տիրում խոր կրճին.  
Ուր՝ տիրում են դեռ վաղորդեան  
Մշուշն ու ցօղ և հովեր,  
Ուր լռութիւնն աղմկում են  
Անդռ <sup>1)</sup> լեռան պաղ շուրեր,  
Եւ ուր ծորին լանջերն ու բաշ  
Ծածկող սօսերն ու կաղնին  
Երկրի ներսը թափանցելու  
Մուտք չեն տալիս օտարին:  
Կանգնած է նա պղտեղ մենակ  
Ուտին փալլուն հըրազէն  
Եւ սրտատրոփ սպասում է  
Ո՞վ պիտ' ելնէ իրեն դէմ...:

Հին քաղերի սերունդ է նա,  
Սասնոյ լեռանց ընտանի.  
Հայեացքն ահեղ, հասակն հսկայ,  
Բազուկն առիւծ կը վանի:  
Բայց այդ բազկով նա ապիրատ  
Գործ չէ տեսել իւր կեանքում,  
Թէպէտ ապրել անկախ, ազատ,  
Բայց և տքնել անդադրում,  
Որ մացառը արօտ շինէ

---

<sup>1)</sup> Սասնոյ լեռներից բարձրագոյնը:



Եւ կածանը՝ արահետ,  
 Որ տկար հողն հերկէ, ուժէ <sup>1)</sup>  
 Դարձնէ յուռթի, պտղաւէտ.  
 Սարի լանջը ծածկէ արտով,  
 Ժայռերին տայ կանաչ տեսք,  
 Բնութեան ժլատ ծեռքէն խրլէ  
 Սռատ հունձ ու առատ բերք:  
 Բայց թէ նախրին մօտ է եկել  
 Երբ իցէ գայլ կամ յովաղ,  
 Հրբով, սրով երկուսին էլ  
 Նա բերել է պատուհաս.  
 Մինի կողը պատառելով՝  
 Միւսն անելով զնդահար,  
 Աղատել է թէ՛ նախիրը,  
 Թէ՛ պահանդըն ահահար:  
 Սապէս, եթէ սահմանէն ներս  
 Անցել է շունչ մի օտար,  
 Որ եղել է կամ նենգ լրտես,  
 Կամ թշնամի յուղկահար.  
 Աւօ քաջի սուրբ իսկոյն  
 Շողացել է նրբա դէմ  
 Կամ զնդակը որոտալով  
 Հողին քաղել անօրէն:

Բայց վաղուց էր ինչ չար բաղդէր  
 Ոտքը մտել չէր Սասուն,  
 Հողում էին մարդիկ այդտեղ  
 Հանգիստ՝ տուն, տեղ անասուն:  
 Հովիւն իւր հօտ լեռան լանջին  
 Արածում էր ապահով,  
 Գեղջուկն ազատ հանդի միջին  
 Ցանում, հնձում անխռով:  
 Իսկ գեղջկուհին հովին տալով  
 Կանաչ, կարմիր քօղ, լաչակ  
 Բանում էր ժիր թէ՛ տան-դրան,

<sup>1)</sup> Սասունցւոց բարբառով պարարտացնել:

Թէ հանդն իջնում համարձակ  
 Զրո՞ւմ էր նա ծառ ու բանջար,  
 Թէ քաղ հանում արտերում,  
 Զունէր երկիւղ, քանդի օտար  
 Զեռք նրբան չէր խանգարում:

Աւօն նոյնպէս այսօր եղներն  
 Առաւ, լծեց արօրին  
 Եւ այգածին շողից առաջ  
 Ակօս քաշեց իւր հանդին.  
 Շտապում էր որ մէջ օրին  
 Օրավարը, գէթ, կիսէ  
 Եւ իրեն հաց բերող հարսի  
 Գովքն ու օրհնենքը լրսէ:  
 Միրտն էր ուրախ, հոգին զուարթ,  
 Վշտի մասին չէր հոգում,  
 Մատաղ հարսի սիրով վառուած  
 Հերկում էր նա և երգում.

— «Դեհ քաշեցէք սիրուն եղներ,  
 «Դուրբան ընեմ ծեր լաշին,  
 «Խովը տարէք զետնի խորեր,  
 «Քար ու կոշտեր թող մաշին

«Հողը դառնայ պարարտ լուռթի  
 «Սերմին տայ կեանք, բոյ, բուսաթ,  
 «Դեհ քաշեցէք, ծեղի զուրբան  
 «Զըլնի թողէք գործ կիսատ:

«Այժմ'ն, ահա, կուգայ շուտով  
 «Ծորենի սերմ շալակած  
 «Տուրնիկի <sup>1)</sup> մէջն ալ խնամքով  
 «Իրած սպաս սոխ ու հաց.

«Մեզ կը բանայ համով սեղան  
 «Զեր ալ կառնէ լուծ, սամիք  
 «Որ հովի մէջ, կանաչ խոտում  
 «Հանգիստ ու կուշտ արածիք:

<sup>1)</sup> Կողքից կախելու մատաղ:



«Երբ արևը անցնէ Անդրք,  
 «Հովը ծածկէ սարի լանջ,  
 «Մենք նորէն ծեռք կառնունք մեր գործ՝  
 «Դուք ծեր լուծր, ես՝ իմ մահ:  
 «Դեհ, քաշեցէք, սիրուն եղներ,  
 «Ղուրբան ընեմ ծեր լաշին,  
 «Խովը տարէք գետնի խորեր,  
 «Քար ու կոշտեր թող մաշին...»:

Յանկարծ հեռուից բոթ գուժեցին  
 Թէ՛ ճքուրդ ու թուրք հրոսակներ  
 «Գաղտնի ճամպով ներս խուժեցին,  
 «Աւրել կուղեն մեր գեղեր...»:

Քաջի մարմնով սուր դող անցաւ,  
 Ձէր դա սարսուռ երկչոտին,  
 —Վրէժի ոգին ծնունդ առաւ,  
 Կրրակ կտրեց Սասունցին:

—«Դեհ, իմ եղներ, կացէք այստեղ  
 «Մեր արօրին պահապան,  
 «Ես պիտ վազեմ շուտ դէպի գեղ  
 «Առնել իմ սուր ու հրացան:  
 «Անօրէններ դաղտուկ ճամպով  
 «Եկան զաւառ <sup>1)</sup> թալնելու,  
 «Այդ շուններուն երթանք շուտով  
 «Մեր բազկի ղյժ ցոյց տալու...»:

Ասաց վաղեց ինչպէս այժեամ,  
 Դաշտը կտրեց, լեռն անցաւ,  
 Ոչ ծոր նայեց և ոչ անդունդ,  
 Շէնի ափին շունչ առաւ:  
 Եւ հաղիւ թէ վերցուց աչեր  
 Գիւղի շրփոթ դիտելու  
 Գողարիկ հարսի զոյդ բաղուկներ  
 Եկան զինքը գրկելու:

—«Արի, Աւօ, քրտնած ճակտիդ

<sup>1)</sup> Այդ անունով Սասունցիք կոչում են իրենց երկիրը:

«Տամ ես փութով իմ համբոյր,  
 «Ապա իմին ձեռք կախեմ  
 «Ուսդ հրացան, մէջդ սուր:  
 «Մեր կտրիչներ վաղուց արդէն  
 «Անցել են ձոր ու հովիտ,  
 «Դու միայն ց'արդ քո արօրով  
 «Կ'զբաղէիր միամիտ:  
 «Էլ մի' հոգար դու իմ մասին  
 «Վազէ փութով դէպ առաջ  
 «Թիւրքաց զնդեր մեր կամրջին<sup>1)</sup>  
 «Կ'ասեն՝ վաղուց են տիրած...  
 «Մի' ուշանար, զնա', հասիւր  
 «Կամ Դաւորկի<sup>2)</sup> քաջերին  
 «Կամ կիրճերում զարան մտիր  
 «Ճամպայ մի' տար թիւրքերին:  
 «Քո ետեից ես կը բերեմ  
 «Վառօդ, զնդակ, զոտ հրացան,  
 «Գնա', իմ քաջ, հղօր բազկիդ  
 «Սուրբ Յովհաննէս<sup>3)</sup> պահապան»:

Լեռնցու սիրտն զգածուեցաւ,  
 Գրկեց իւր գողտր ամուսին,  
 Շրթանքը ջերմ համբոյր տուաւ  
 Զէնքերն առաւ իւր ուսին:

—«Մի' վրդովուիր, սիրուն Ալմօ,  
 «Թիւրք մօտ չի գալ մեր դեղին,  
 «Քանի դեռ չէ մեռել Աւօ,  
 «Եւ կը տիրէ իւր բազկին:  
 «Յետ դարձիր դու, նստիր մեր հիւղ,  
 «Վառօդը թող բերէ լաճ,  
 «Սիրտըդ պահէ դեռ աներկիւղ  
 «Մեզի կ'օգնէ հայոց խաչ»:

<sup>1)</sup> Միակ անգքը Սասնոյ երկիրը մտնելու համար:

<sup>2)</sup> Սասնոյ յայտնի գիւղերից մէկը:

<sup>3)</sup> Յայտնի վանք և ուխտատեղի Սասունում:



«Բայց թէ հայուն նա խրոպի  
 «Եւ յաջողէ թշնամուն,  
 «Այն ժամանակ էլ ոչ որի  
 «Յոյս մի՛ կապիր հաստատուն  
 «Հենց որ տեսար թէ թիւրք հասաւ  
 «Մեր արտերի սահմանին,  
 «Գիտցի՛ր որ քո Աւօն մեռաւ  
 «Վէրք առնելով իւր կրօքին:  
 «Գիտցիր որ թիւրք նախ իմ դիակ  
 «Կոխեց իւր պիղծ ոտքերով  
 «Ապա թէ մեր երկրի սահման  
 «Կարաց անցնել ապահով:  
 «Այն ժամանակ էլի՛ր տրնէն  
 «Ձեռքդ առած սուր դաշոյն,  
 «Հարուած տուր ու հարուած ստացիր,  
 «Բայց մի՛ մատնուիր թշնամուն.  
 «Թող նա մաս մաս քեզ յօշոտէ,  
 «Բայց երբէք չը պարծենայ  
 «Թէ՛ բռնութեամբ ինք տիրել է  
 «Մի Սասունցի աղլըկայ...»:

Ասաց, թռաւ դիւցաղնորդին  
 Դէպի շէնի լանջն ի վայր,  
 Իջաւ արագ Դալճորկի ձոր,  
 Անցաւ գետակն ու անտառ.  
 Եւ գերդ սարի կրօքէն խլուած  
 Թափով դլուող ործաքար,  
 Վազում էր նա, դիմում յառաջ,  
 Չառնելով շունչ ու դադար.  
 Մինչ հոսկ ուրեմն հասաւ կրճին,  
 Ուր զոյգ ժայռոտ քարալանջ  
 Միմեանց դէմ կուրծք տնկած ասես՝  
 Մարտ են մղում աննահանջ,  
 Եւ հինաւուրց կաղնիների  
 Ու սօսենեաց ծմակով  
 Վերէն, վարէն շրջապատած

Դարձնում են վայրն ապահով:

Այստեղ, ահա՛, ցաւոց երգիչ,  
Տեսաւ նրբան քո հոգին,  
Մէջքը մամռոտ ժայռին լենած,  
Աչքերն անթարթ, զայրագին.  
Դիտում էր մերթ մոռաքը ձորին,  
Մերթ հեռաւոր շրջական,  
Որ ծածկւում էր հրոսակներով  
Խառնինադանն բաղմուլեան:

— Դա ճամբարն էր թիւրք զօրքերի,  
Որ քրդերին սերտ յարած,  
Դիմում էր դէպ Անդոքածոր  
Սփռել այնտեղ աւերած....:

Զգաց Աւօն որ իրանից  
Առաջ գացող կտրիչներ  
Յաղթըւել են զօրքի ուժից,  
Տալով նրբան թանկ զոհեր.  
Որ հայրենի գաւառն արդէն  
Անցել է թիւրք զօրքի ձեռք,  
Զգաց՝ և իւր հպարտ սրտին  
Տիրեց սևուկ մաղձ ու մէգ:

— «Այսուհետև էլ ապրել  
«Թող ամաչէ Սասունցին,  
«Քանի ազատ իւր լեռնն՝  
«Ոտք կոխեց ժանտ թշնամին,  
«Քանի իւր կին, հարս աղջիկ  
«Առակի պիտ՝ ենթարկուին,  
«Քանի իւր սուրբ եղեցիք  
«Տմարդ քրդից պիտ պղծուին...  
«Մեր հարք աղատ ու անկախ  
«Աւանդ տուին այս լեռներ,  
«Ամօթ է որ բաց աչօք  
«Տեսնենք նոցա օտար Տէր:  
«Օհ, ուրեմն, դէպի մահ,



«Հաւասարինք մեր եղբարց,  
 «Երբէք չասէ թող, աշխարհ  
 «Թէ՛ «Սասնու՜մ հայ մի մնաց,  
 «Որ կեանքն աւել շատ սիրեց  
 «Քանթէ՛ մահը կտրիչի,  
 «Կամ իւր հպարտ վիզ ճկեց  
 «Կրրելու լուծն ստրկի...»:

Ասաց հրացան հասնեց ուսից  
 Առաջ դիմեց սրարշաւ,  
 Անցաւ թաղուն ճամպաներից  
 Եւ թշնամու դէմն տռաւ:  
 Տեսաւ արդէն դաժան վաշտեր  
 Մօտենում են նեղ անցքին,  
 Ընտրեց արագ ապահով տեղ,  
 Հրացանն ուղղեց դէմ զօրքին.  
 Եւ լեռնցու ուժեղ ծայնով  
 Կոչեց. «Հեռո՛ւ, օն հեռու...»  
 Եւ արձագանքն այրերի մէջ  
 Կրկնեց գոչիւնն ահարկու:  
 Ապա թնդաց քաջի հրաղէն,  
 Գրորորուեց թիւրք լիսնապետ,  
 Երկրորդ, երրորդ հարուածներէն  
 Խշան դրօշն և իւր պետ:

Թշնամիներ խելակորոյս  
 Իրար անցան մի վայրկեան  
 Զի կարծեցին թէ՛ դարանող  
 Գունդ կայ իրենց յանդիման:

—«Զգուշացէք, անշուշտ զեաւուրն  
 Այլտեղ ունի նոր թակարթ,  
 Մի՛ խուժէք ներս այդպէս յախուռն  
 Մի՛ տաք զոհեր տարապարտ»:  
 Գոչեց զդոյշ պետը զօրքի  
 Իւ լետ կասեց առ բոպէն.  
 Հետեւում էր զօրքը նըրան  
 Եւ քիւրդ ամբոխն անօրէն:



Սակայն, ուռա՞ղ, չը կար թակարթ  
 Ոչ էլ զօրաց թագուն զունդ.  
 «Ուշ մնացած» Սասնոյ քաջն էր  
 Հասել այդտեղ սրտաթունդ.  
 Որ արութեամբ լի՝ և զիտակ  
 Իւր իրաւանց ու պարտուց  
 Յաւակնում էր նա մեն, մենակ  
 Վրդէժ լուծել թշնամուց.  
 Եւ դիրք առած նրա հանդէպ  
 Քաջակորով, անվրիատ,  
 Կրրակում էր հրազէնն ստէպ,  
 Հոգիք քաղում անընդհատ:

Այդ զիտացին թշնամիներ  
 Բայց չը տեսան կտրիչին,  
 Նորէն ուժգին աղաղակով  
 Գրոհ տուին դէմ կրճին.  
 Եւ հրահոսան զնդակների  
 Ահեղասար մի տարափ  
 Տեղացին շարշ կրճին, ժայռին,  
 Կոծելով թուփ ու քարափ...

Որոտումէր ծորն Անդռքի  
 Հեռւմ անտառն ալեւոր  
 Եւ լեռներում արծազանքի  
 Ձայնը զոռում ահաւոր.  
 Իսկ հրանօթի թնդիւնները  
 Ժայթքելով ծուխն անընդհատ  
 Լցնում էին սար ու ծորեր  
 Գորշ ամպերով բարդ ի բարդ:  
 Յետ չէր կասում, սակայն, Աւօ՛ն,  
 Ժայռն էր իրեն պահապան,  
 Կռւում էր նա անդիմադարձ  
 Հուր ցանելով անխափան:  
 Եւ մերթ ընդ մերթ դէպի երկինք  
 Պարզելով իւր սէզ աչեր,

Նորոյժ հայցում չողնած բաղկին  
Կորով՝ սրտին անվեհեր.

Եւ երկաթէ բազուկ քաշին  
Էր տնաստան, աչքն անահ,  
Ամեն մի իւր նոր հարուածով,  
Տանում էր մին զէպի մահ:

Եւ զի իւր լանջ փամփուշտների  
Պատում էին զեռ շարքեր,  
Չէր հաւատում թէ կրճէն ներս  
Պիտի անցնեն թիւրք զօրքեր.

Արձակում էր արագ արագ  
Հրագէնը մարդածախ  
Եւ մօտեցող հրոսակների  
Յրում խմբերն աչ ու ծախ.

Բայց շատ չափեցաւ, հատաւ պաշար  
Եւ թշնամին բաղմաղէն  
Սպասում էր հուր տարափով  
Պատել նրան չորս դիէն.

Այժմ միայն, կտրիչն զգաց  
Թէ անգօր է և անկար,  
Վարանեցաւ ու հառաչեց  
Սրտի խորքէն վշտահար.

— «Ա՛խ թէ տային ինձ այս ժամուն  
«Կրակների նոր պաշար.  
«Ես այս վայրագ հրէշներին  
«Կրհնձէի շարիշար...

«Բայց ով արդեօք, ո՞ր սուրբ ու խաչ  
«Պիտ զայ ինձի օգնական...  
«Տէր, դու պարզէ քո հզօր աչ  
«Մի՛ մեզ ոտքի տար կոխան»:

Ասաց Աւօն. նայեց չորս դին,  
Եւ ահ՝ յանկարծ ժայռերից  
Իշաւ Ալմօն զէնքեր ձեռին,  
Իրրեւ հրեշտակ երկնքից:

— «Ահա՛ քեզի պատրաստ կրակ



«Իմ սիրեցեալ տմուսին,  
«Մի՛ սրգոյիր որ ես եկայ  
«Մեռնել քեզ հետ միասին.  
«Գիւղում ոչ ոք նստաւ իւր տուն,  
«Ամենքն ելան կռուելու,  
«Է՛ր քո Այմօն ձեռքը ծոցում  
«Մընար թիւրքից գերուելու...»):

Ասաց, պարզեց նրան պաշար  
Վառօդին ու ղէնքերին,  
Եւ սրտատրոփ սպասում էր  
Կամքը լսել ընկերին:

Քաջի սիրտը զուարթացաւ,  
Գովեց արարքն իւր հարսին  
Ապա բերածն առնելով շուտ  
Տուաւ նրան զատ բաժին.  
— «Մահն է այժմ մեր առաջը  
«Գիտցիր, ասաց, ո՛վ իմ կին,  
«Վերջին անգամն է այս արեւ  
«Որ տեսնում ենք միասին.  
«Բայց այս լոյսէն ու արեւէն  
«Նաւագոյնը կայ այնտեղ,  
«Ուր մեր եղբարք մեզմէ առաջ  
«Գացին մահուամբ փառայեղ  
«Քիչ ատենէն ես էլ նրանց  
«Պիտ հետեւիմ, անկասկած,  
«Զի չէ կարող տեւել երկար  
«Իմ վրիժառու կոտորած:  
«Դու էլ մահէն թէ չես սարսում,  
«Եղիր ուրեմն նահատակ,  
«Եւ Սասնոյ մէջ թող որ ապրէ  
«Միայն անուանդ չիշատակ:  
«Առ քեզ բաժին և բնորէ շուտ  
«Պատսպարան ժայռերէ,  
«Տուր հարուածներ շեշտ ու անգութ  
«Որքան ձեռքդ կը զօրէ.

«Ձի քանի շունչ ունինք մենք դեռ  
 «Պիտի զարնենք թշնամին,  
 «Իսկ երբ մեզի մահ կը տայ Տէր,  
 «Առա կը հանգչինք միասին...»:

— «Այժմ'ի ուխտն էլ հենց այդ է  
 «Որ եթէ ինքն այսուհետ  
 «Ձէ ապրելու, գոնէ մեռնէ  
 «Իւր թագ-պսակ էրկան հետ:  
 «Եւ ուխտս, ահա, կատարեցաւ,  
 «Փառք զթառատ Աստծուն»:  
 Ասաց, արագ առաջ անցաւ  
 Իրբեւ մարդիկ աննկուն.  
 Եւ ընտրելով իրեն պատնէշ  
 Մինը խոշոր ժայռերից,  
 Փութաց իւր նոր հարուածներով  
 Էրկան լինել մարտակից:

Եւ ծիգ նրանք կուտւմ էին  
 Ձերդ վրիժառու ոգիներ  
 Եւ մեն մի զոյգ հարուածներին  
 Ջահուժ նոյնքան մարտիկներ:  
 Ոչ օք հովտի հրոսախմբից  
 Կիրճը մտնել չէր զօրում  
 Ձի դաղտնահար զնդակներից  
 Ամենքի սիրտն էր դողում:  
 Եւ ժամերը սահում էին,  
 Ձոր ու անտառ որոտում,  
 Կիրճը սակայն ազատ էր դեռ  
 Իսկ ամոլներն աննկուն:

Բայց ա'հ, լանկարծ թաւուտներից  
 Որոտաց գաղտ մի հարուած,  
 Որ քաշասիրտ Սասնոյ դստեր  
 Սէզ նակատին էր ուղղուած:  
 «Ահ...» մի քնէց հերոսուհին,  
 Գլթեց և զէնքն ընկաւ վար:



Վազեց Աւօն դէպ սիրելին,  
 Տեսաւ նրան զնդահար...  
 Եւ Ալմօ՛րի շուշան ճակատ  
 Կայլակում էր վարդ արիւն,  
 Իսկ սուրբ մարմնից հոգին արդար  
 Բաժանւում էր անխօսուն:  
 Սակայն իւր սէ, չքնաղ աչեր  
 Վերջին անգամ նա բացաւ,  
 «Մնաս բարով իմ քաջ Աւօ...»  
 Ասաց մեղմով ու մեռաւ...

Կտրիչն արագ ծնկան իջաւ,  
 Գրկեց սիրած հարսի դին,  
 Հանգչող շրթանցն համրոյր տուաւ  
 Եւ արտասուեց դառնազին:  
 Այս առաջին արտասուքն էր  
 Որ նա թափեց իւր կեանքում.  
 — «Գնա՛, Ալմօ, քո ետեից  
 Ահա՛ դալիս եմ իսկոյն»:

Ասաց, քաշեց նա պատենից  
 Իւր պողպատեայ հատու սուր,  
 (Զի չէր կարող կռուել հեռուից,  
 Հատել էր իւր պտտրաստ հուր).  
 — «Իմ էլ մահուան ժամը հասաւ...»:

Որոտաց նա դուրս վազեց՝  
 Եւ վիրաւոր առիւծի պէս  
 Թշնամեաց դէմ խիզախեց:  
 Ինչպէս յանկարծ անտառի մէջ  
 Փրթում է դռ փոթորիկ  
 Ծառեր կոնդեր միմեանց տալով  
 Զարդում, փշրում է սաստիկ,  
 Այսպէս Աւօն սուրբ ծեռին  
 Ընկաւ կռուող զօրքի մէջ  
 Եւ աչ ու ծախ հարուածելով  
 Մահ էր սպիռում նա անվերջ,  
 Եւ աչերը արիւնախանձ

Շունչը ինչպէս վառ հրատ,  
 էլ չէր նայում յետ ու առաջ,  
 Հարուածում էր անընդհատ:

Բայց ի՞նչ պիտի անէր մի ձեռն,  
 Թէ կուզ լինէր երկաթի,  
 Նա յաղթուեցաւ վերջ ի վերջոյ  
 Իւր թշնամուց տմարդի.  
 Երբ քուրդ ու թուրք հրոսակների  
 Ստուար մի զուռնոյ շուրջ պատած՝  
 Հերոսի դէմ զնդակների  
 Սաստիկ տարափ մի տեղաց:

Ընկաւ Աւօ՛ն սուրբ ձեռին  
 Գնդակները կուրծքի մէջ,  
 Բայց իւր ազատ հոգին մնաց  
 Անպարտելի մինչև վերջ.

— «Մեռնում ես, այժմ հանգիստ,  
 «Զի ապիրատ թշնամին  
 «Զի պիտ՝ պարծի թէ՛ անարդել  
 «Եկաւ տիրեց մեր երկրին,  
 «Թէ հայ եղբարք լուռ, անմռունչ  
 «Վիզ հրկեցին իւր առաջ,  
 «Թէ Սասնոյ լաճ՝ մեռնելու տեղ՝  
 «Ճիշտ արձակեց կամ հառաչ...»:

Ասաց և իւր վերջին բարև  
 Տուաւ Սասնոյ լեռներին,  
 Փակեց աչեր, թռաւ, հասաւ  
 Իւր սիրեցեալ Ալմօ՛ին...:

ՍՈՒՐԱՑԱՆ.

Թիֆլիս 1895